

# ԱՆՁԿԵՐՏԻ ԲԱՆԱԻՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Գ թ. Նժդեհեանի

Ա Ն Յ Ա Ն Գ Ա Ռ Ա Մ Ն Ե Ր

- Գառաւ մէկ հեղ (անգամ) կը Վնասակաւ փորձը մարդերուն խարեն: խրատ կ'ըլլայ երկրորդ անգամ չ'ֆասուելու:
- Գար խողցող զինք կը ժըժ- Ո՛ր և է գործ կատարողը նոյն խայ (շարժել, ցնցել): գործի պահանջած ձևերը պէտք է առնէ:
- Գարծենցող պարկն ա մտեր: Յետոյ կատարելիք գործի ա- ջողութեան և արդիւնքի վրայ պարծենցողը անաջողութիւն կու- նենայ:
- Գէծ (կայծ) մի կրակով կ'ու- Չնչին պատճառներով և անբա- ղայ ծով վառայ <sup>1)</sup>: ւական միջոցներով ուրիշին ֆասս տալու աշխատիլ:
- Գուտուկ (կճուճ) ինչքան եռայ, Բարկութիւնը, կրքոտ բնաւու- եռ ուր վրէն կը թափի: րութիւնը և հայհոյանքը միայն յայտնող մարդերուն ֆասս են:
- Գօշի (պօշայ-մըթըպ) եղ որ Երբ մէկը առատութեան մէջ շատ եղնի՛ կէս վրէն կը քսայ: խնայողութիւն չի ընել, ամէն բան իզուր կը վատնէ:
- Սատանի մալ (ստացուածք) Անազնիւ միջոցներով ձեռք բե- սատանի ճամբով կ'երթայ: րուած հարստութիւնը անազնիւ միջոցներով ալ կը կորսուի:

<sup>1)</sup> Վատ ու չարասիրտ պառաւ կին մը գազ մը (փշալիք բոյս) կը վառէ, ու ձեռքը բռնած կը վազէ դէպի ծով, զայն այրելու համար: Եր՞նչ կ'ընես, կ'ըսեն իրեն, գաղով մը ծով չի վառիր:— Վառի, չ'վառի, ես իմ զէշութիւն կ'ընեմ, կը պատասխանէ ջա- ղուկը:

- Սատանի շարուխ (տրեխ) շուտ Զար, փաստակար ու կեղծաւոր կը մաշի: մարգերու բարեկամութիւնը վաղանցուկ է:
- Սև եռ կարմիր եզան ողնով Երբ մէկը ուրիշի օգնութեամբ (օղն—կոնակ, շնորհիւ իմաստով) ապրուստ, աշխուժիւն և պատիւ տրեխի կ'ընայ (ցատկել): կը գտնէ:
- Սև ի ներս եմ էրեր (ընել), Արտաքուստ կոկիկ և ուրախ սխտակ (սպիտակ) ի դուրս: երևոյթ մը, ու ներքուստ մեծ վիշտ ու կակիծ ունենալ:
- Սիրտ գորտնկուն (գորտ, ուրուն կ'ըսեն նաև՝ գորտնուկ) թերութիւնները չի նշմարեր: Սէրը կոյր է, իր առարկայի էլ կպեր ա. (սիրտ կպիւլ—սիրել կը նշանակէ <sup>1)</sup>):
- Սիրտնի փթիւր(քակոբ), փթիւրն Նոյն ի պատ:
- Սխտակ (սպիտակ) շուն բամբակնի մը ջնջին և անարժէք բակ ծախողին ֆեսա ա: նմանը կամ կեղծ մրցակիցը իրենց որոշ փաստակարութիւնն ունին:

<sup>1)</sup> Հեթաթի մէջ կը պատմուի որ քանի մը ճամբորդներ իրենց փոքր եղբայրը կորսնցնելու մտքով կ'իջեցնեն ջրհորը, իրենց ձիերուն ջուր հանելու: Յետոյ կապը կը կտրեն, կը թողուն ջրհորի մէջ, ու մեծ քարով մը կը գոցեն ջրհորի բերանը: Այն ատեն երկու սևադէմ մարդիկ (արաբ) կը բռնեն ջրհորի մէջ բանտարկուած երիտասարդը, ու կը տանին լուսաւոր, հիանալի կահաւորուած, ու ծաղիկներով զարդարուած սենեակ մը: Երիտասարդը շորս կողմ կը նայի, և այդ սենեակի մէջ բնակելու արժանի արարած մը չի գտներ: Սենեակի անկիւնը դրուած բազմոցի վրայ կը նշմարէ մեծ և զգուելի գորտ մը, ծաղիկներով ու թանկագին կերպասներով շրջապատուած: Յանկարծ գորտը կը խօսի երիտասարդի հետ, կը հարցնէ անոր կարծիքը իր մասին, իր երևոյթի, գեղեցկութեան կամ տգեղութեան մասին: Երիտասարդը միշտ անոր վրայ սքանչացումով կը պատասխանէ: «Ուրեմն ինձի կը հաւնես», կը հարցնէ գորտը: «Այո, շատ կը հաւնիմ» կը պատասխանէ երիտասարդը: «Յանձն կ'առնես զիս սիրել և ինձի հետ ամուսնանալ»: Եւ երբ երիտասարդը ուրախ-ուրախ դրական պատասխան կուտայ, գորտը վերջին անգամ կը հարցնէ. «Ես զգուելի գորտ մ'եմ, իմ քնչ գեղեցկութիւնը քեզ գրաւեց: «Մտախ սիրածը գեղեցիկ կ'ըլլայ միշտ» կը պատասխանէ երիտասարդը: Այս խօսքի հետ գորտի մորթը կը ճեղքուի և դուրս կուգայ հիանալի գեղեցկութիւն ունեցող աղջիկ մը, որ ուխտած էր, կամ այնպէս էր իրեն վիճակուած, որ երբ սեւէ մէկը գինքը սիրէր, գորտի կերպարանքը պիտի թողէր, աղջիկ դառնար և անոր հետ ամուսնանար: Աղջիկ շատ մարդիկ գլխատել տուած էր, իրեն չ'հաւնելու համար: Զրհօրէն դուրս եկան, և երիտասարդը շատ բազաւոր եղաւ կնոջ շնորհիւ:

- Սխտոր ծեծած, որ խաշ ուտեա<sup>1)</sup>: Ապրուստի ամէն միջոց առանձին աշխատութիւն կը պահանջէ:
- Սոխ ուտողի բերան կը մըրմըռայ (կսկծել), կամ,  
— Սոխ ուտողի բերնէն հոտ կիզայ:
- Սութ (սուս) սանամ (մուրհակ) Երբ պարսաւելի գործ մը բնաւ ընկեր ինձու: Զարութիւն գործողը կը կրէ իր գործի հետեանքը:
- Սուր ի սուր խաուի՝ արուն Նեղ պարագաներուն մէջ ազնուր չ'զառնայ: Գահանները իրարու կը դազարին սրտացաւանք ըլլալ:

<sup>1)</sup> Իշխան մը պտոյտի կ'իւնէ իր երկիրներուն մէջ, ու կը հանդիպի արտը հերկող երիտասարդ երկրագործի մը: Իշխանը կարեկցելով ասոր աղքատութեան, և հիանալով միանգամայն աշխատասիրութեան վրայ՝ մեծագումար նուէրի մը հետ իր աղջիկն ալ անոր կնութեան կուտայ, մտածելով թէ այդ երիտասարդը միայն պիտի աջողի աշխատութեան վարժեցնել և այդ միջոցով առողջացնել իր ծոյլ և հիւանդոտ աղջիկը: Քիչ ժամանակէն վերջ աղջիկը խոտասցունած գումարին հետ կ'ուղարկուի երիտասարդին: Իշխանի զաւակ, փափուկ անած ու մեծցած, մթթէ կարելի էր շուտով համակերպել զիւղական կոշտ կեանքին, ու աշխատիլ տնոնց կիներու պէս: Այդ թերևս անկարելի ըլլալ: Բայց մեր երիտասարդը գործնական և հաստատ կամքի տէր մարդ էր: Մօրը պատուիրած էր բնաւ չ'արթնցնել քնէն փափկասուն իշխանուհին, ձան չ'հանել, հետը չ'խօսալ գործ շրջանի, և... հաց չտալ ուտելու: Ամէն երեկոյին՝ երբ երիտասարդը արտէն տուն կուգար՝ կը հարցնէր մօրը. «Այսօր ձոյ է աշխատեր»: «Ես և դուն», կը պատասխանէր մայրը: «Է՛հ, հաց ուտենք ես և դուն» կըսէր որդին: Այսպէս անցաւ մէկ-երկու օր և հացի երես չտեսաւ իշխանագուն նազելին, որ ճարը կարած վերջապէս՝ երրորդ օրը շուտ արթնցաւ, քաղցած մնալէն անշուշտ, ու սկսաւ աւելով տունը աւելի, մաքրել, այս ու այն կողմը տալ յատակի կեղտերը, խեղճ ու անճարակ կերպով մը: Իրեկունը երբ ազան կը հարցնէր մօրը. «Թէ է այսօր ձոյ է աշխատեր», մայրը իր պատասխանի հետ աւելցուցուց «Թիչ մ'ալ հարսը»: Որդին ըսաւ մօրը. «Հաց ուտենք ես և դու, և քիչ մ'ալ հարսը»: Այսպէս երրորդ օրուան երեկոյին փափկասունից իշխանագունը կտոր մը շոր հաց ստացաւ որպէս սնունդ, քիչ մը ոյժ ստաւ, և ստիպուեցաւ ակամայ համակերպիլ ու հաշտ աչքով նայիլ զիւղական կեանքին ու աշխատութեան, այնպէս որ յաջորդ օրերը ամբողջ տան յատակը աւելց, աւտուքը թափեց դուր, ջուր բերաւ աղբիւրէն, թոնրի մոխիրը հանեց, և հետըզհետէ ուրիշ շատ ծանր աշխատանքի ալ վարժուեցաւ, և իր սնունդն ալ օրէցօր համեմատաբար աւելցաւ: Կէս տարի յետոյ ծոյլ ու

- Մբբերուն էլ խունկ ու մոմ կը Ո՛ւն բանի կարոտութիւն չու-  
պակաի. նեցող մարդն իսկ երբեմն բանի  
մը պակասութիւնը կ'ունենայ:
- Վախեցէք էնարնէ (անկէ), որ Ամէնէն երկիրալի ու ֆրասա-  
չ՛վախենայ Աստծուց: կար մարդերը Աստուած չճանչ-  
ցողնէրն են:
- Վանք մի շէն, ո՛չ հազար աւեր: Լաւ են սակաւաթիւ օգտակար-  
ները, քան բազմաթիւ անօգուտ-  
ները:
- Վաս դրկեց (զբացի) մարդ Կարոտութիւնը, և անզութ,  
կ'էնայ հաճըի (գործիք) տէր: չօգնող զբացին մարդը կը մղեն  
աշխատութեան և ամէն հարկաւոր  
բան ձեռք բերելու:
- Վարդն ի յիս, փուշն ի կրակ: Երբ կուզուի անձէ մը, կամ  
բանէ մը օգուտներ քաղել, և ար-  
համարհել անոնց վատ կողմերը:
- Տաժին (որսի շուն) ինքն ա, Անպատուաբեր գործ մը յանձ-  
նենք (որս) խըլղին նշանց կի- նարարել իբմէ մեծին և պատուա-  
տայ (ցուցնել): ւոր:
- Տամպուրով (նուագարան) գըմ. Կոշա ու կոպիտ մարդեր փա-  
շու գլխուն չ'զարկեն: փուկ միջոցներով ուզողութեան  
չեն բերուիր:
- Տէվէն ուր փանից (համես) կու- Աշխատողներու ծախքը իրենց  
տայ: աշխատութենէն կեխէ:
- Տէրտէրն ի յարտն ա տանկցեր: Երբ կղերը և կարդացողը աշ-  
խարհականէն աւելի հակամէտ  
կըլլայ զեղծում գործելու:

տկար իշխանագունը աշխատատէր, ժիր, և առողջ գիւղացի կին  
մը դարձած էր արդէն: Մեքենայի նման կը դառնար, ու բնաւ  
չէր յիշեր, և որ աւելին է, սաստիկ կերպով կատէր իր նախկին  
ծոյլ կեանքը: Այդ ատեններ իր իշխան հայրը այցելութեան կու-  
գայ փեսային, և ծոյլ ու հիւանդ աղջկան: Զարմանքը շատ մեծ  
կըլլայ, երբ կը տեսնէ աշխատութեան ընտիր տիպար եղած և  
առողջացած աղջիկը: Ուրախութիւնը անհուն կըլլայ, և կօրնէ  
այն օրը, երբ բազդ ունեցաւ հանդիպել գիւղացի երիտասարդին:

Այն ատեն աղջիկը կը մօտենայ հօրը, և քիչ մը սխտոր ու  
զայն ծեծելու ամանը ու գործիքը կը յանձնէ ըսելով. «Հայրիկ,  
գործ մ'ալ դու կատարէ, որ քաղցած չմնաս, սխտոր ծծնա՛, որ խաշ  
ուտես»: Իշխանը կը հասկնայ երիտասարդի բռնած ընթացքը, իր  
կինը աշխատութեան վարժեցնելու մէջ, և յաջորդ օրը գոհ սրտով  
և շատ ընծաներ տալով կը մեկնի, և ծերութեան ժամանակ իրեն  
յաջորդ կը նշանակէ իր փեսան: